

## Հաշվետվություն

ՀՀ Սյունիքի մարզի «Գորհայքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ուսումնասիրությունների վերաբերյալ

Տնօրեն	Մ. Թադևոսյան
Հաշվապահ	Ա. Շահինյան
Հասցեն	Սիսիան գ. Գորհայք
Հեռախոս	99-2-19

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի 2014թ. «Ներքին աուդիտի բաժնի» տարեկան ծրագրի, մեր կողմից իրականացվեց Սյունիքի մարզի «Գորհայքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:

Մենք աուդիտի ենք ենթարկել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանը, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Աուդիտն ընդգրկում է նաև ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների և համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգումը, գնման գործընթացի իրականացումը, կիրառվող հաշվապահական հաշվառման սկզբունքները, ֆինանսական փաստաթղթերի կազմման գնահատումը, ղեկավարության կողմից իրականացվող կառավարումը, խիստ հաշվառման փաստաթղթերի հաշվառման և պահպանման ընթացքը, դասագրքերի վարձակալությունը:

Աուդիտն անցկացրինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Մեր պարտականությունն է իրականացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:

Կազմակերպությունը ունի կանոնադրություն, որը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում՝ առակ է վկայականը:

Կազմակերպությունում գործում է վարձու աշխատողների աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման վերաբերյալ հրամանագիրք, դրանք սահմանված կարգով համարակալված, թելակարված եվ կնքված է կազմակերպության կնիքով:

Ուսումնասիրության պահին կազմակերպության դրամարկղում կանխիկ դրամի մնացորդ հաշվապահորեն և փաստացի չի եղել:

2011թ. հունվարից դպրոցում սովորում էր 71 աշակերտ և գործում էր 10.25 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 32 մարդ, այդ թվում 23 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 73 աշակերտ, գործում էր 10.5 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 33 մարդ, այդ թվում 24 մանկավարժ:

2011թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 35575.6 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 35410.4 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2011թ.՝ 165.2 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 35408.1 հազ. դրամ,

փաստացի ծախսը կազմել է 35312.9 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2012թ. կազմել է 167.5 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 99.3 տոկոսով:

Առ 01.01.2011թ. կազմակերպության դեբիտորական պարտքը կազմել է 278.2 հազ. դրամ, իսկ առ 01.01.2012թ. այն կազմել է 373.4 հազ. դրամ, իսկ կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չեն արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Դպրոցի ջեռուցումը կատարվում է կենտրոնացված համակարգով, գազով:

2011թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 281.5 հազ. դրամ:

2011թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերը ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2011-2012 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 645 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 227.3 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2010-11 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 5 հատ իննամյա կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյանում:

2012թ. հունվարից դպրոցում սովորում էր 73 աշակերտ և գործում էր 10.5 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 33 մարդ, այդ թվում 24 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 73 աշակերտ, գործում էր 9.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 33 մարդ, այդ թվում 24 մանկավարժ:

2012թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 36482.5 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 36315.0 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2012թ.՝ 167.5 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 36222.4 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 36529.8 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2013թ. կազմել է 260.1 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 100.0 տոկոսով:

Առ 01.01.2013թ. կազմակերպության դեբիտորական պարտքը կազմել է 277.8 հազ. դրամ, իսկ կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

2012թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 276.3 հազ. դրամ:

2012թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2012-2013 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 591 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 198.9 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2011-12 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 7 հատ իննամյա կրթության վկայական և 5 հատ միջնակարգ կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյաններում:

2013թ. հունվարից դպրոցում սովորում էր 75 աշակերտ և գործում էր 9.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 33 մարդ, այդ թվում 24 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 77 աշակերտ, գործում էր 10.5 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 31 մարդ, այդ թվում 22 մանկավարժ:

2013թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 35440.3 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 35180.2 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2013թ.՝ 260.1 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 34468.6 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 34377.4 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2014թ. կազմել է 971.7 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 97.0 տոկոսով:

Առ 01.01.2014թ. կազմակերպության դեբիտորական պարտքը կազմել է 369.0 հազ. դրամ, իսկ կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

2013թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 389.4 հազ. դրամ:

2013թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերը հիմնականում ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2013-2014 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 630 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 207.8 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2012-13 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 10 հատ իննամյա կրթության վկայական և 2 հատ միջնակարգ կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյաններում:

Արտաբյուջե.

Կազմակերպությունը ունի արտաբյուջետային հաշիվ, որի հիմնական մուտքը ստացվում է դպրոցի վերանորոգման ընթացքում ապամոնտաժված շինանյութերի վաճառքից:

Առ 01.01.2012թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 2.7 հազ. դրամ,, մուտքը 2012թ. կազմել է 2159.1 հազ. դրամ, ծախսը կազմել է 1308.4 հազ. դրամ, մնացորդ առ 01.01.2013թ. կազմել է 853.4 հազ. դրամ:

2013թ. մուտքը կազմել է 1083.0 հազ. դրամ, ծախսը կազմել է 959.8 հազ. դրամ, մնացորդը առ 01.01.2014թ. կազմել է 976.6 հազ. դրամ:

Ծախսերը կատարվել են ըստ նախահաշվի :

Կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին, բացառությամբ գնումային գործընթացի:

Եզրակացություն

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվեց, որ 2011թ. նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 99.3 տոկոսով, 2012թ. կատարվել է 100.0 տոկոսով, 2013թ. կատարվել է 97.0 տոկոսով:

Առ 01.01.2011թ.կազմակերպության դեբիտորական պարտքը կազմել է 278.2 հազ. դրամ, առ 01.01.2012թ. այն կազմել է 373.4 հազ. դրամ, առ 01.01.2013 կազմել է 277.8 հազ. դրամ, առ 01.01.2014թ. կազմել է 369.0 հազ. դրամ, իսկ կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Հաշվետու ժամանակաշրջանում նախահաշիվներով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չի արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Ապրանքանյութական արժեքների ստացումը և ծախսերը կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան

Մենք կարծում ենք, որ աուդիտի ընթացքում հավաքագրվել է բավարար և հիմնավոր տեղեկություններ մեր կարծիքը հայտնելու համար:

Մեր կարծիքով կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական հաշվետվությունները, տնտեսական և կազմակերպչական գործառույթները կազմակերպության ֆինանսական վիճակի, դրամական հոսքերի, տնտեսական և կազմակերպչական գործունեության մասին տալիս են հիմնականում ճշմարիտ և իրական պատկեր ՀՀՀՀ-ի, ՀՀ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի  
<<Ներքին աուդիտի բաժնի>> պետ՝  
Գլխավոր մասնագետ՝

Է. Միրզոյան  
Ս. Վեզիրյան

15 հունիս 2014թ.